

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԲԵՄԱԿԱՆՔ

Շր. 17 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Հայկազուն Արդ. եղիայեան:

Կիր. 18 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

-Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց Տ. Արիս եպս. Շիրվանեան:

Բշ. 19 Յունիս.- Ա. Կուսանացն Հռիփսիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան Ս. Հռիփսիմէի մատրան մէջ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաջանեան:

Ուր. 23 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 24 Յունիս.- Ա. Գրիգոր Լուսաւորչին ելն ի Վերապէն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի աւանդատան Ս. Լուսաւորիչ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

- Կէսօրէ ետք, «Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի» նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը - ապա ծնրաղիր «Տէր Ողորմեա» երգուեցաւ ըստ սովորութեան:

Կիր. 25 Յունիս.- Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի: Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Լուսարարապետ Սրբազանը: Ապա կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք» վասն Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Շր. 1 Յուլիս.- Արքան՝ Մեծին Ներսիսի Հայրապետին Մերոյ եւ Խաղայ եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Խաղ Արդ. Ճունտուրեան:

Կիր. 2 Յուլիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբա-

զանը: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Ուր. 7 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 8 Յուլիս.- Ա. Գրիգոր Լուսաւորչին (Գիւտ Նշխարաց): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Կիր. 9 Յուլիս.- Երէկուան Ս. Գրիգոր Լուսաւորչի Տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Երուսաղէմի Հրէական րաժնին մէջ գտնուող եւ մեծ Սուրբին անունը կրող եկեղեցւոյ մէջ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Աւետիս Վրդ. Իփրանեան:

Դշ. 12 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Եշ. 13 Յուլիս.- Ա. Թարգմանչաց Վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Շր. 15 Յուլիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան: Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Կիր. 16 Յուլիս.- Գիւտ Տփոյ Աւստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Ուր. 21 Յուլիս.- Նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան:

Շր. 22 Յուլիս.- Երկուտասան Առաքելոցն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Հայկազուն Արդ. եղիայեան:

Կիր. 23 Յուլիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ուր. 28 Յուլիս.- Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տանարին կից Ս. Էջմիածնի մատրան մէջ: Նախագահութեամբ Պատրիարք

Սրբազան Հօր:

Շր. 29 Յուլիս.- Յիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրնէճեան: Ս. Պատարագի ընթացին Տրց. Արքիւր Պալոյեան Լուսարարայեւտ Սրբազան Հօր ձեռամբ ձեռնադրուեցաւ Սարկաւագ:

- Կէսօրէ ետք Սյակերպութեան մեծահանգէս նախատօնակին եւ Տեառնեղբայր Յակոբոս Առաքելի յիշատակի հանգէսին նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ապա «Օրհնեցէ՛ գՏէր» շարականի երգեցողութեամբ միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան: Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «եկեցէ՛»ի եւ «Հսկման» կարգերուն: Հանդիսապետեց Տ. Արիս եպս. Շիրվանեան:

Կիր. 30 Յուլիս.- Վարդապետ (Տօն Սյակերպութեան Տեառն): Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան: Օրումն հանդիսաւոր Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ քարոզեց Լուսարարայեւտ Սրբազանը:

Բշ. 31 Յուլիս.- Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշեանեան:

Ուր. 4 Օգոստ.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց Տ. Արիս եպս. Շիրվանեան:

Շր. 5 Օգոստ.- Թաղէութի Առաքելոյն եւ Անդգիտոյ Կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Կիր. 6 Օգոստ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Շր. 12 Օգոստ.- Արքեպիսկոպոսն եւ Թեառնեղբայր Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանի, Գրիգորիսի եւ Դանիէլի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կիր. 13 Օգոստ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Տ. Արիս եպս. Շիրվանեան կատարեց «Թաղողօրհնէ՛»ի արարողութիւնը: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Բշ. 14 Օգոստ.- Այսօր սկսաւ Ս. Կոյսի

Վերափոխման Տօնը կանխող հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը Գեքսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ:

Շր. 19 Օգոստ.- Եփեսոսի Ս. Ժողովոյն (431): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածամայր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշեանեան:

Կիր. 20 Օգոստ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. հայկազուն Արդ. Եղիայեան:

Ուր. 25 Օգոստ.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց Տ. Սեւան եպս. Ղարիպեան:

Շր. 26 Օգոստ.- Տօն Շողակաքի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածամայր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեան:

- Կէսօրէ ետք, Լուսարարայեւտ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

- Գիշերասկզբին, նոյն վայրին մէջ, պաշտուեցաւ «եկեցէ՛»ի եւ «Հսկման» եւ գիշերային ժամերգութիւնները: Հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան:

Կիր. 27 Օգոստ.- Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Լուսարարայեւտ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրումն հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Տ. Արիս եպս. Շիրվանեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ «Անդաստան»: Հանդիսապետեց Պատարագիչ Սրբազանը:

Բշ. 28 Օգոստ.- Յիշատակ Մեռելոց: Ս. պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան:

Շր. 2 Սեպտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ժախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրնէճեան:

Կիր. 3 Սեպտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, ըստ սովորութեան պատարագեց տաճարին տեսուչը Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ս. Երաշխաւորաց խորանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան:

Բշ. 4 Սեպտ.- Նախատեսակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Գշ. 5 Սեպտ.- Ս. Յովակիմայ եւ Աննայի: Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարի Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամարարն էր տաճարին Տեսուչը Տ. Հայրիկ Վրդ. Գալայեան: Հանդիսապետն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Շր. 9 Սեպտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեան:

- Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազանը:

Կիր. 10 Սեպտ.- Գիւտ Գօտույ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Տիրամօր Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 16 Սեպտ.- Նիկիոյ Ս. Ժողովոյն երեք Հարիւր Ութնտասն Հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան:

Կիր. 17 Սեպտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Դշ. 20 Սեպտ.- Նախատեսակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Եշ. 21 Սեպտ.- Մնունգ Ս. Աստուածածնի ի յԱննայէ: Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը, «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Ս. Սեւան Եպս. Ղարիպեան: Կատարուեցաւ Գոհաբանական Մաղթանք, Հայաստանի Հանրապետութեան 15 տարեդարձին առթիւ: Հանդիսապետեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 23 Սեպտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան:

- Խաչվերացի մեծահանգէս նախատեսակին նախագահեց Պատրիարք Սրբազանը: Ապա Լուսարարապետ Սրբազանը կենաց Փայտի մասունքը Ս. Գլխադրի մատուռէն թափօրով փոխադրեց Աւագ Սեղան:

- Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ

պաշտուած «Եկեցե՛ք»ի եւ «Հսկման» կարգերուն հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Կիր. 24 Սեպտ.- Տօն Վերացման Ս. Խաչին: Ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան»: Հանդիսապետեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Լուսարարապետ Սրբազանը:

Կէսօրէ ետք «Խաչվերաց»ի մեծահանգէս «Անդաստան»ին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Բշ. 25 Սեպտ.- Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համարձում Վրդ. Քէշիշեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգիստ վասն հոգւոցն Մելգոնեան հարազատաց Կարապետի եւ Գրիգորի, քարեկարաց ազգիս եւ Ս. Արթուրոյ: Հանդիսապետեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 30 Սեպտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Նշան: Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրնէ՛հեան:

Կիր. 1 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեան:

Ուր. 6 Հոկտ.- Նախատեսակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Դէորգ Եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շր. 7 Հոկտ.- Ս. Դէորգայ Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Դէորգ Եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան:

- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ ժամերգութիւնն ու նախատեսակը: Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զափարեան:

Կիր. 8 Հոկտ.- Տօն Վարագայ Ս. Խաչին (660): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Լուսարարապետ Սրբազան Հօր երկրորդ պաշտօնական մուտէն ետք, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շր. 14 Հոկտ.- Արքոց Եօթանասուն եւ երկու Աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գաւթին մէջ գտնուող Ս. Գէորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

Կիր. 15 Հոկտ.- Այսօր կատարուեցաւ Ռամլէի Ս. Գէորգայ վանքի տարեկան ուխտագնացութիւնը, ի ներկայութեան եաֆայէն, Հայֆայէն եւ Երուսաղէմէն մասնակցող հաւատացեալներու: Հանդիսացեալ էր Տ. Արիս եպս. Շիրվանեան, որ «Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Ուր. 20 Հոկտ.- Արքոց Թարգմանչաց նախատօնակին նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շր. 21 Հոկտ.- Ա. Թարգմանչաց Վարդապետացն Մերոց: Տօն Ագգապին եւ Եկեղեցական: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ Տ. Ղևոնդ Արդ. Յովհաննիսեան: «Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեան: Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն մեծանուն քարերարներ, Գալուստի, Նուարդի Սարգսի եւ Տիրուհիի եւ համայն Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներուն հոգիին ի հանգիստ, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Կիր. 22 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսացեալ էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեան:

Շր. 28 Հոկտ.- Արքոց Զորից Աւետարանչացն: Ս. Պատարագը կը մատուցուի Ս. Յարութեան Տաճարի շրջափակի Ս. Յովհաննու մատուռին մէջ: Այսօր օդը անձրեւոտ ըլլալուն Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ ի Ս. Յարութիւն: Հանդիսացեալ էր Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Կիր. 29 Հոկտ. Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի

խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Բշ. 30 Հոկտ.- Ս. Յովսէփայ Աստուածածին: Ըստ սովորութեան, Գերսեմանիի Ս. Աստուածածնայ Տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայեան պատարագեց նոյն տաճարին մէջ գտնուող Հայր Յովսէփի գերեզմանի մատրան մէջ: Հանդիսացեալ էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շր. 4 Նոյ.- Արքոց Երկուսասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիտարի: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեան:

- Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի եւ Խաչգիտի ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեան:

Կիր. 5 Նոյ.- Գիւտ Խաչի (326): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսացեալ էր Տ. Արիս եպս. Շիրվանեան: Լուսարարապետ Սրբազան Հօր երկրորդ մուտքէն ետք, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարը եւ ֆարոգիչն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրնէքեան: Ս. Պատարագէն ետք, կազմուեցաւ մեծահանդէս թափօր իջնելով նախ Գիւտ Խաչի այլը եւ քարձրանալով Ս. Գերեզմանին շրջափակը, երիցս դառնալով անոր շուրջը եւ մէկ անգամ Պատանաւորելոյն: Թափօրը կը գլխաւորէր Լուսարարապետ Սրբազանը, ամպիովանիի տակ եւ կենաց Փայտի մասունքն ի ձեռին: Քրիստոսի Ս. Գերեզմանին առջեւ «Խաչի Քո Քրիստոս» շարականի երգեցողութենէն եւ խնկարկութենէն ետք, արարողութիւնները վերջացան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Բշ. 19 Յունիս 2006.- Մեծն Բրիտանիոյ Թագուհի Էլիզապէթ Բ.-ի ծննդեան յօրեկանին առթիւ, Երուսաղէմի Անգլիական հիւպատոսի հրաւերով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Արիս Եպս. Շիրվանեան եւ Գուսան Վրդ. Ալեանեան:

Բշ. 3 Յուլիս.- Միացեալ Նահանգներու Անկախութեան 230րդ տարեդարձին առթիւ, Միացեալ Նահանգաց Ընդհանուր Հիւպատոսի հրաւերով իրենց կեդրոնին մէջ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, Պարէտ Ծ. Վրդ. Երեցեան եւ Գուսան Վրդ. Ալեանեան:

Դշ. 12 Յուլիս.- Ընդառաջելով Ֆրանսական Ընդհանուր Հիւպատոսի հրաւերին, Ֆրանսայի Ազգային Օրումն առիթով, հիւպատոսարանի շէնքին մէջ կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Արիս Եպս. Շիրվանեան, Գուսան Վրդ. Ալեանեան եւ Իսահակ Արդ. Մինասեան:

Շր. 21 Սեպտ.- Հայաստանի Անկախութեան 15րդ տարեդարձի առթիւ, Երուսաղէմի մէջ ՀՀ Պատույ Հիւպատոս Յուլակ Մումեանի հրաւերով, Նօթր Ժամի բացօթեայ հաւաքավայրին մէջ կազմակերպուած հիւրասիրութեան, ներկայ գտնուեցաւ Սեւան Եպս. Ղարիպեան, ընկերակցութեամբ Միաբան Հայրերու:

Բշ. 9 Հոկտ.- Երուսաղէմի քաղաքացի Ուրի Լուփուլիանսիի կողմէ բոլոր կրօնապետներուն ուղղուած, Տաղաւարահարաց-Սուֆօ տօնին առթիւ եղած հրաւերին ընդառաջելով, քաղաքացիութեան մէջ տեղի ունեցած հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Արիս Եպս. Շիրվանեան եւ Գուսան Վրդ. Ալեանեան:

Եշ. 12 Հոկտ.- Սպանիոյ Ազգային Օրումն տօնակատարութեան առթիւ, Երուսաղէմի մէջ նոր նշանակուած Ընդհանուր Հիւպատոսին հրաւերով, իրենց յարկին տակ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Արիս Եպս. Շիրվանեան եւ Գուսան Վրդ. Ալեանեան:

ՆՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Եշ. 3 Օգոստոս.- Տնօրէն Ժողովոյ որոշմամբ, Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ Հոգշ. Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան, նշանակուեցաւ Տեսուչ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի:

Հոգշ. Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան նշանակուեցաւ Տեսուչ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի եւ Սրբոց Հրեշտակապետաց Վանուց: